

ԾԱՌԻԿ

ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՌԿԱՆ

Ե Ի

ԱԶԳ. ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՍԱՏԻՐԱԿԱՆ

Ծ Ա Ղ Ր Ա Թ Ե Ր Թ

Որ ամէն բան կը մեղացնէ, չստոծ կը պատճ, չեղածը կը նկարագրէ, միտք կ'ընկալայէ, կը ձողիլէ եւ... Եւրոպայի:

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրգուշու խոն թիւ 7 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1908 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ۷ درعليهده غلطده قورشولې خاندۀ نومرو

ԿԱԽԵԱԼ ՊՈՒԼԿԱՐԻԱՆ

ՉՈՒԱՆԸ ՓՐՑՈՒՑ

Կը տեսնէ՞ք կերակուրի խնդիր մը մինչև ո՞ւր տեղումնք կ'երթայ:

Լեզածը ի՞նչ էր որ: Հասցկերոյթ մը տուինք օտար տէրութեանց դեպքաններուն և հարկ չտեսանք Պ. Կէշօֆը այս կերակուրին հրաւիրելու, նկատելով որ անկախ մենէ էր:

Միթէ մարդ մը երբ հիւրերու ճաշ կուտայ, իր ընտանիքին անդամները հիւրերուն տեղը կը նըստեցնէ՞...

Ամենեւին:

Բնդհանրապէս հիւրերը կը նըստեցնէ իրենց տեղերը և շատ շատ իր ընտանիքին անդամներուն... կառածնութիւն ընել կուտայ անոնց:

Ուրեմն, եթէ Պ. Կէշօֆ այս դիւանագիտական հասցկերոյթին հրաւիրուէր ալ, իրեն ուրիշ բան չի կար ընելիք, բայց եթէ դեսպաններու հիւրամեծարութիւն:

Որովհետեւ Պուլկարիա մեր ընտանիքին մէկ անդամն է, ըստ Պերսլինի վեհաժողովին այսինչ յօդուածին (յօդուածին թիւը հիմա միտքերնիս չի գար կոր):

Թերեւս մեր ընտանիքին քիչ մը մեծցած զուակը, որուն տուած էին իր գործերը ինք տեսնելու և իր զգեստը ինք հագնելու արտոնութիւնը:

Բայց այսչափ միայն:

Արդ, Պ. Կէշօֆ ի՞նչ քուտ:

Կերակուրէ զրկուած մանչուկի մը պէս քէն պահեց:

Ըսինք իրեն թէ կերուած բաները խրջախ բաներ չէին, ասոր համար հարկ չի կար սիրար կոտորելու, նոյն իսկ ապուրը համարը բան մը եղած էր, մտեղէնը աղէկ միս չէր, այլ մարեա, դարաման:

Պ. Կէշօֆը մխիթարելու համար ըսինք որ չի վայելք կերակուրի մը համար լալ ու պօռալ կանչել, թէ իրեն մենք տակաւին շատ ազուոր բաներ կրնանք հրամցնել, ֆրասըխը շողուա, ֆրիսի կրասե կը կերցնենք, Պօն-Մարշէէն խաղալիկներ կ'առնենք...

Բայց Պ. Կէշօֆ լացաւ միշտ.

— Հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, զիս ճաշի

չհրաւիրեցին, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, ես մամա կ'ուզեմ, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, ես ըրիաւ կ'ուզեմ, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, ես միտեա տօլմաի կ'ուզեմ, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, ես հէլվա կ'ուզեմ, բազալիս կ'ուզեմ, ես մանաղիսի կ'ուզեմ...

— Ինչո՞ւ կուլաս, իմ մանկիկ, քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ...

— Հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, զիս չծեծեցին, բայց ճաշի չհրաւիրեցին...

— Ի՞նչ կ'ըլլայ, չօժօխս, այսօր չհրաւիրեցին, որովհետեւ ես պանձի մարդ կար, վաղը երբոր ես պանձի մարդ չըլլայ, այն ատեն քեզ ալ ճաշի կը հրաւիրեն:

— Հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, ես դեսպաններուն հետ հաց ուտել կ'ուզեմ անպատճառ...

— Չըլլա՛ր, չօժօխս, չի վայելք անոնք դեսպան են, իսկ դուն գործակատար...

— Հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ, ես ալ դեսպան ըլլալ կ'ուզեմ, կ'ուզեմ, կ'ուզեմ...

Ու Պ. Կէշօֆ, սկսաւ ոտքերը գետինը դարնել, չփացած տղու մը նման:

Բայց, որովհետեւ ամէն չփացած տղու ուզածը չի արուիր և որովհետեւ երբ մէյ մը ամէն չփացած տղու ուզածը սկսի արուիր ասոր վերջը չի գար, Պ. Կէշօֆ դեսպանական հասցկերոյթէն դուրս մնաց:

Ասոր մէջ ո՞չ ոք յանցանք ունէր. Պ. Կէշօֆ դեսպան չէր, որով չէր կրնար դեսպաններու կարգը նստիլ, և մենք չէինք կրնար ըսել անշուշտ.

— Սիրելի՛ Պ. Կէշօֆ, թէև դուք դեսպան չէք, սլլ պարզ գործակատար մը, բայց ձեր երեսը դեսպանի դէմք է, ուրեմն մենք ալ ձեզի այս դեսպանական ճաշին կը հրաւիրենք:

Ասոր վրայ Պ. Կէշօֆ քիթը կախեց և ելաւ գնաց:

Ո՞ւր:

Հո՞ն, ուրկէ եկած էր:

Եւ սկսաւ հոն ալ լալ:

— Ո՞վ եղբայրներս, գիտէ՞ք ինձի ի՞նչ ըրին:

— Ի՞նչ ըրին, աղբարի՛կ:

— Պուլսոյ մէջ դեսպաններու ճաշ

տուին և զիս այդ ճաշին չհրաւիրեցին:

— Է՛յ...

— Ես ալ ձգեցի եկայ:

— Ի՞նչո՞ւ:

— Չէ՞ք հասկնար, զիս ճաշի չի հրաւիրեցին անո՛ր համար:

— Անօթի՛ր էիր որ:

— Չէ՛, պէ՛տ պապամ, անօթի չէի, բայց խըղձիչ եղայ...

— Ի՞նչո՞ւ...

— Քանի՞ անգամ պիտի ըսենք, դեսպաններուն ըսովը նստելով չճաշեցի անոր համար...

— Մենք ի՞նչ ընենք հիմա ասոր:

— Ի՞նչ պիտի ըսենք... պէտք եղածը:

Ու սկսան օրերով մտածել թէ ի՞նչ պարտ էին ընել:

— Ի՞նչ ընենք, ըսին, ի՞նչ ընենք, ի՞նչ ընենք...

Եւ յանկարծ հանճարեղ գաղափար մը յղացան:

— Պուլկարիոյ անկախութիւնը հռչակե՛նք, ըսին:

— Հա՛, աղէկ ըսիք, պատասխանեց Ֆէրիտնանտ իշխան որ վաղ էր եկած լոկ իշխան մնալէ:

Ու պաշտօնական յայտարարութիւն մը ըրին սա՛ կերպով.

— Ես Ֆէրիտնանտ իշխան վաղ եկայ Պուլկարիոյ իշխան մնալէ, ես ասկէ վերջ Պուլկարաց Չարն եմ և Պուլկարիա ինքնօրէն տէրութիւն մըն է...

Բոլոր պաշտօնականները ծափահարեցին շերմապէս և պալքանեան պանիրներուն վրայ սկսան գրել՝ Չար Ֆէրիտնանտ արքայ անկախ Պուլկարիոյ: Նոյնը գրեցին Պոլսոյ մէջ բոլոր Պուլկար կաթնափաճատները իրենց կաթի կիւրծներուն վրայ:

Կը տեսնէ՞ք մեզի ո՞ւր կը տանի ստամոքսի խնդիր մը:

Եթէ Պ. Կէշօֆ այն պատմական օրը հաց կերած ըլլար միւսներուն քովը, այսօր Պուլկարիա անկախ չպիտի հռչակուէր և Ֆէրիտնանտ իշխան Պուլկարաց Չար չպիտի ըլլար:

Պ. Կէշօֆ օր մը կերակուր չկերաւ դեսպաններուն քովիլը և Պուլկարիա թագաւորութիւն հռչակեց:

Ես ամբողջ ամիս մը պատրաստ եմ անօթի մնալու, եթէ վստահ ըլլամ որ ամիս մը վերջը զիս ալ թագաւոր պիտի հռչակեն... հիւսիւսային բեռներն:

«ԿԱՎՈՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱԿՈՒԹԻՒՆ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱՅԻՐ —

Ամէն մարդ դիտել կուտայ մեզ քէ՛ կալուստ եւ Ծաղիկ միասին աստուի կը նստին:

— Մենք կալուստէն ալ Ծաղիկին ալ չենք կրնար գտնուիլ, կ'ըսենք, բայց գիտեցինք ի՞նչ մը ամենուցէի, որպէս զի երկուսին մէկանց բաժանուր գրուինք:

Մեր բարձրագոյն անտանը այս փափուկ խնդիրը նկատուրեան տանելու համար բացառիկ նիստ մը գումարեց եւ որոշեց հետեւեալ վերջնական սակագիրը:

★ Կալուստ եւ Ծաղիկ միասին, արեւկան, Պոլսոյ համար 80, վեցամետայ՝ 45 դրու: Կալուստ կամ Ծաղիկ՝ առանձին՝ արեւկան 45 դրու:

Կալուստ եւ Ծաղիկ միասին, արեւկան, Կառախ համար 100, վեցամետայ՝ 60 դրու: Կալուստ կամ Ծաղիկ՝ առանձին՝ արեւկան 60, վեցամետայ՝ 35 դրու:

Կալուստ եւ Ծաղիկ միասին, Սրասահմանի համար արեւկան 25 ժր, վեցամետայ՝ 13 ժր.: Կալուստ կամ Ծաղիկ՝ առանձին՝ արեւկան 15, վեցամետայ՝ 8 ժրան:

★ Զի քէր կուտանք կոր եւ զանտաքի՛ր մամաւանդ:

Բայց ամէն մարդ գիտէ արդէն քէ մենք փարայի համար չենք ածաթի, — ո՛հ, քա՛ւ լիցի, — այլ Հա՛յ ազգին համար:

Կ. Կ. Կ.

Թի 27

10 ՓԱՐՍ.

Ի՞նչ շահելու միտք ունի Պուլկարիա ինքզինքը անկախ հռչակելով: Նախ 11,000 ոսկի տուրքէ կ'ազատի, ինչ որ քիչ փարա չէ, մասնաւոր ասանկ քօքօզութեան օրերուն:

Բայց ասիկա բան մը չէ միւս մեծ բանին քով զոր պիտի շահի Պուլկարիա, եթէ... միշտ այսպէս անկախ մնայ:

Մինչև այսօր Պուլկարիա... կախուսած (անկախին հակադարձը) պէտուութիւն մը ըլլալով՝ իրաւունք չուներ Մակեդոնական խնդրին մէջ քիթը խօթելու:

Բայց, հիմա, իբր անկախ պէտուութիւն, քիթը՝ Կալոնոշին քիթին պէս պիտի երկնցնէ և ամէն անձին, նոյն ինչ ուրիշ շնորհայտացած ասանկ ալ, իր քիթը պիտի խօթէ Մակեդոնական խնդրին մէջ, և դեռ... շատ մը ուրիշ խնդիրներու մէջ:

★

Այս քաղաքական լուրջ յօդուածը աւարտելու վրայ էինք ի հարկէ, — որովհետեւ գրելիք տեղերնիս չի մնաց — երբ միտքերնիս բան մը ինկաւ:

Անցեալ օր, Դաշնակցականները հասցկերոյթ մը տուին, ուր զիս հրաւիրեցին, բայց ընկերս՝ Ընկեր Թօլայեան մոռցան հրաւիրել:

Կը բողոքե՞նք այս անիրաւութեան դէմ:

Հետեւաբար մենք ալ մեր անկախութիւնը կը հռչակենք և մեր վերջնազրկը կը զրկենք Դաշնակցական Դաշիճին որ ի Սազըզ-Աղաճ, թիւ 2:

Ծանօթ.— Այս լուրին վրայ ինկան... Իբրայի բոլոր կիները, ճաշարանապետները, գարեջրատունները, և այլն: Պատերազմը հաւանապէս կ'ան է:

Կ. Կ. Կ.

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՃԱՌ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱՅԻՐ —

Էյ վաթմանտալար. ո՞վ հայրենակիցներ. ազատ քաղաքացիներ. այո՛. ո՛չ. (ծափեր). վերջապէս նոր աւելիմ. անկյին լրտեսները (ջերմագիտ ծախսահարոքիւններ). արեւը այլեւս փայլուն է. ազատ էք. ամբողջ Թուրքիա. Թուրք, Հայ, Յոյն, Հրեայ, Չէրքէզ, Իլերք, Արաբ,

Պուրկար, եզրարք ենք մենք. (հիկզ վայրկեանի չափ ծափահարութիւն). օ՛ խաճիկէր. մեր արիւնը ձեռքին. ջանք. աշխատութիւն. ալ մի՛ վախնաք. մե՛տը ազատ է (վրաս գրե՛). կեցցէ ազգերու համերաշխութիւնը. օթուզ սէնէտէն պէրու. լացինք. ողբացինք. ցնծանք և ուրախանանք. Յուլիս 1). Շէֆիզ, Իզլէթ, Ֆէնիմ (կը սուշեն). Կանոնը կսասի. էյ էրմէնի վաթմասալար. ծիծեռնակ ծիծեռնակ. իրենց արիւնը. մեր ա. րիւնը. անոնց արիւնը. Եւրոպային բերանը բաց մնաց. յեղափոխականներ. կեցցէ՛ Դաշնակցութիւնը (25 օր իրարու վրայ ծափահարութիւն). Խորհրդարան. բնարութիւն. երես. փոխան. գաւառներ. զրահուորչու. նինք. շոքեաւ. չունինք. կամօրջ չունինք. ժե՛ծն թուրքերը. (խանդա. վառ ծափահարութիւն). ասոր փա. րայի բուն չունինք. Օսմ. գրոչին ներքէ. ապոկեղորոնացու՛մ. նիազի. էնվէր. համբուրենք զիրար. հուրրա. եաչա՛. կեցցէ. զիթօ. պուալօ. բանակալութիւն. Սահմանադրական թուրքիա. գուրում. ա՛հ, ո՛հ, վա՛խ. վա՛յ. աւա՛ղ. երանի. հոգոցն հան. գուցեղոց. Բարիցի բոնկուէ. վա՛ր մը պիզէ եան պազան. Սասուն. Ձէյ. թուն և փառք յախտեանս յախտե. նից. Ա.մէն:

ԿԵՅՅԷ՛՛ . . .

Վ Ա Յ Ձ Ե Ձ . . .

(ԱՒԵՏԱՐԱՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ)

Յայնժամ խոսեցաւ Իզմիրեան Հայրիկ ընդ ժողովուրդն իւր և ստէ.

Յաթոռն իշխանութեան և կա. ուավարութեան՝ նստան գողք, ա. ւազակք և արիւնարբու հարստա. հարիչք: Չափենայն ինչ որ բունա. բար հրամայեցին ձեզ՝ վա՛յ նաչար արարիք և հնազանդեցայք: Էտէպ. սիզք այնտրիկ կապեցին բեռինս ծանրունս և դժուարակիրս ի վերայ ուսոց ձերոց, մինչդեռ ինքեանք ո՛չ կամէին շարժել զնոսա՛ չորնալիք մատամբ իւրեանց:

Չափենայն գործս իւրեանց առ. նէին ի ցոյցս մարդկան և լայնէին և պարարէին զգրպանակս և զպաթախ որովայնս իւրեանց:

ՎԱՅ ՁԵՁ դժոխածին դահճաց և բունաւորաց որ հեղէք զանմեղ արիւն 300,000 զաւակաց Ազգի Ի. մոյ սիրեցելոյ:

ՎԱՅ ՁԵՁ անիծեալ Իզլէթ, նէճիպ և զաւակիցք, որ հազարա. ւոր բրգունս կազմեցէք յոսկերաց զաւակաց իմոց ի Հայաստան աչ. խարհի:

ՎԱՅ ՁԵՁ ծնունդք իմից, որ աւեր և ամայի թողէք զգեղոս, զէնս, զքաղաքս և զբնակութիւնս՝ որպէս գառնուկ պատուական Հա. յոց՝ որք էին փառք և պատիւք երկրին Օսմանեան:

ՎԱՅ ՁԵՁ մարդապատկեր գա. զանացք, որք նսեմացուցէք և քէ. փազէ արարէք զարիւնալի և զդա. րաւոր համբաւս ներոնի, Լէնկիթի

մուրի և Շահ Ապպասի՝ ձերով սա. զայլլա՛յան բռնակալութեամբ:

ՎԱՅ ՁԵՁ որ շամալը քիպրիթ իսկ վաճառելու անարժան և ան. կարող միւսիպէթներ էիք, բարձ. րացաք յաստիճան նախարարի և փաշայութեան, կոչեցաք հաւատա. րիմ պաշտօնեայք ակրութեան, մինչ. դեռ աւազակարար քանդէիք զՆի. մունս նորա, դազանարար կոտորէիք անմեղ զաւակունս և զծաղիկ զի. նուորականս նորա, դաւէիք, ստէիք, կողոպտէիք, առհաւիրք սիռէիք յամենայն կողմանս երկրի, անխճօ. րէն վաճառէիք զպատիւ և զհարբս. տութիւն տէրութեան, թաթախէիք զոճրադործ ձեռս ձեր յամենայն պա. տիւ ի սրբութիւն, քանդի ոչ գոյր ի ձեզ ամօթ և պատիւ և խիղճ և ա՛հ Տեառն:

ՎԱՅ ՁԵՁ գիշակեր բորենիք, որք ուխտեալ էիք չարչարել, յօշ. տել և անլուր տառապանօք նահա. տակել զաւակունս իմ և ի գին պատ. ուական արեան նոցա՛ կառուցանել զպարանս փառաւորս, զբասաթս, զարաւթըմանս հոյակապս, յաւելուլ անբաւ հարստութիւն, բազմապատ. կել Սողոմական վայելս, զնաթիլտս, զհոմանիս, զտալխաւուլուս և զմի. մոսս:

ՎԱՅ ՁԵՁ, ծնունդք սանդարա. մետաց, որք ո՛չ յԱստուծոյ երկնչէիք և ի մարդկանէ ո՛չ ամաչէիք, որ իբրև մարմար և պողպատ՝ անզգայ և անկարեկից էիք արտասուաց, ա. զերսանաց, հեծեծանաց և պաղատա. նաց որք առաջի ձեր պարզէին մայրք, ա. մուսինք և զաւակունք ձերոց հա. զարաւոր զօնից՝ որք էին ի բանտի, ի տանջանս և յաքսորավայրս: Ո՛վ անիծից ծնունդք, ո՛վ հիմճենք զը. փոխոց, ո՛վ կնքանայք սաղայելաց, ո՛վ Փայպիքաթորք զահճաց և բըռ. նաւորաց, ո՛վ յարենէ իմից շաղախ. եալ արիւնարբու գազանք:

Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր սուերակ: Բայց ասեմ ձեզ թէ ո՛չ կամիմ տեսնել զըլըւտած սու. ութըս ձեր մինչև եկեացէ որ արգա. րութեան և վրէժխնդրութեան, և յայնժամ ի բերանոյ Հայութեան գո. հութեամբ և ցնծութեամբ գոչեցից և ազազակեցից. «Արք արձակեա զժառայ քո, Տէ՛ր, զիս տեսին աչք իմ զարդարութիւն քո և զչարաչար սատակունս արիւնարբու դահճաց Ազգի Իմոյ:»

ՎԱՅ ԻՆՁ . . .

Ա Ն Կ ՈՒ Տ Ի Ի Մ Ը Պ Տ Ո Յ Տ Ը

[ԲԵԱԿԱՆԱՐԱՐ ՀԵՏԻՈՅԸ]

ԳՈՒՍՈՑ Թ-ԱՂԹՐՈՒՆ ՄԷՋ

ԽԱՍԿԻՒՂ

IX

Խասգիւղ գիւղ մըն է, ուր հակա. ոակ գիւղին խաս անունին, շատ մը խամ մարդիկ կան:

Այս թաղը օրօրոցը եղած է մեր ամէնէն. . . պինդ գլուխ և ինասճի աղբայնի շոջերուն:

Խասգիւղ օճախը եղած է բոլոր Ակնցի ամիրաներու և ասոր համար այս գիւղը կը պարծի իր մեծ տու.

ներովը որոնց մէջ ա՛րրաներ կը բնա. կէին ժամանակաւ և որոնք այժմ բնակարան եղեր են. . . մուկերու և ար. ծեմ հարկ չկայ կրկնելու թէ, ամի. րաներուն յաջորդեցին մուկերը:

Կենդանութեան նշան տուած ըլ. լալու համար այս թաղը օրը հրկու անգամ իր թաղականին հետ կոխ. կընէ և չորս անգամ ալ եկեղեցիին զանգակը կը. . . զարնէ:

Խասգիւղցին իր թաղականը կ'ընտ. րէր գիւղին որոշեալ մէկ փողոցէն և այդ փողոցը կը կոչուէր անմահերու և կամ թաղականներու փողոց: Այդ փողոցէն ընտրուած թաղականները միապետութեամբ կը կառավարէին թաղը: Իսկ երբ Աստուած մի՛ ա. րացէ ուրիշ զանազան փողոցներէ թաղականներ ընտրուէին, այն ատեն սահմանադրական կառավարութիւն մը կը դառնար: Խասգիւղի մէջ շատ քիչ կ'ապրի սահմանադրական կա. ուավարութիւն մը: Թաղականները հոս վեց տարի թաղականութիւն ը. նելէ ետք, երբ օրինաւորապէս կը հրաժարին՝ իրենց դահաժառանգ զա. ւակները կը բազմեցնեն այն աթոռին վրայ, որ թաղականի աթոռ կը կոչ. ուի և որուն վրայ նստիլը մեծ փառք կը համարին:

Ասիկայ հին օրերու մէջ էր սա. կայն, անկէ յետոյ հանրապետական կառավարութեան փոխուեցաւ տեղ. ւոյն թաղականութիւնը, երբ ջրհան. կիրներ, կոչկակարներ, ախիաներ և պիճիներ ալ սկսան մասնակցիլ թա. ղականութեան:

Թաղին մէջ երիտասարդութիւն մը կայ որ միշտ կը շարժի . . . եթէ շարժող գտնուի. եթէ իր գլխուն ձգես տարիներով կը քնանայ:

Թաղեցին ունի ներսէսեան վար. ժարան մը, ուրկէ բաւական կանո. նաւոր մարդիկ ելած են. անկանոն. ները բացառութիւն կը կազմեն:

Թաղեցին ատենօք այնքան չէն ու պայծառ կը պահէր իր վարժարա. նը որ տեղացի թուրքերը և Հրեա. ները իրենց զաւակները ներսէսեան դպրոցը կը զրկէին, իսկ այսօր ինք անոնց դպրոցները կը զրկէ: Այն ա. տեն թաղեցին ուրի՛շ սիրտ ունէր: Շատ հաւանակա՛յ է:

Խասգիւղցին շատ չարքաչ և ա. մէն բանի համեոզ ու օգնող է: Այս. պէս երբ թաղին մէջ հրեան ծագի, ամբողջ թաղեցին տունէն դուրս կը վազէ և կրակը մարելու համար կա. րողութեանը չափով կ'աշխատի. իսկ երբ վարժարանը բարոյապէս մոխիր դառնայ՝ ոչ մէկ թաղեցի գլուխը պատուհաններէն դուրս չհաներ, Հե. տեաբար այս անպատեհութեան ա. ուժքը առնելու համար ամենէն կտրուկ և գործնական ճամբան է՝ նախ վարժարանը կազով թրջել և յետոյ լուցկիով մը բռնկցնել զայն. ամբողջ թաղը գէշերազգեստով հոն կը վազէ:

Ասոր համար է որ Խասգիւղցին միշտ կը բռնկի և կը բորբոքի լուց. կիլի պէս . . . երբ հայրենասիրութեան վրայ է խնդիրը: Եթէ այս բորբո. քումէն անմիջապէս օդուտ քաղես՝ կրնաս իրմէ՛ ի նպաստ կարօտեալնա.

րու դրամ հաւաքել: Սակայն մասն. րերկրորդ մը անցնելուն պէս, ինչպէս լուցկին, Խասգիւղցին ալ կը մարի անմիջապէս: Վիեննայի ամենէն գէշ լուցկիներուն տեսակէն է Խասգիւղ. ցին, բունկիւն ու մարիլը մէկ է. սի. կտու մը վառելու համար անոնցմէ առնուողն քսան հատ վառելու է:

Եկեղեցի մըն ալ ունի Խասգիւղ որուն մէջ ամէն բան կայ բացի քա. հանսոյէ: Չես գիտեր թէ ո՛վ կը մատուցանէ պատարագը. թէ և Կրպ. րաց դաս մը կայ որ ձայնը կը մար. զէ գինետուններու մէջ և յետոյ այդ ձայնով կը փառաբանէ Խասգիւղի Ե. հովան, որ աղուոր ձայնի շատ սի. րանար է:

Երիտասարդութիւն մը ունի որ շատ լուսաւորուած է, այն օրէն ի վեր՝ երբ Խասգիւղի մէկ քանի տե. ղերուն մէջ. . . Լիւիս Լաբարներ սկսան վառել: Իրարու հետ շատ բարեկամ են այս երիտասարդները. բայց այս բարեկամութիւնը հազիւ շարժմ մը կը տեւ և պայմանաժամը լրանալուն իրարմէ կը բաժնուին: Ասոնց բարեկամութիւնը կարելի է նմանցնել Գերմանական վարնոց չոլխայէ շինուած բանթալօնի մը որ շարժմէ մը կը մաշի և օր մըն ալ քիչ մը ուժով նստելուդ պէս՝ եր. կուքի կը բաժնուի և շապիկը ե. տեւէր կ'երևայ: Բանթալօնին այս բացուած քին «Բանթալօնս բացուած է» կ'ըսենք, իսկ Խասգիւղցին «մենք բացուած ենք» կ'ըսեն:

Խասգիւղցին ո՛չ չողորթութ է, ո՛չ կեղծաւոր և ո՛չ աղատախօս. բարեխառն բարք մը ունի: Յարա. տեութիւնը հոս միմիայն վէճ յարու. ցանելու մէջ կը տեսնուի:

Խասգիւղցին աղբայնիս ըլլալէ աւելի տնտեսագէտ է. ասոր համար երբ կամօրջէն չողենաւ նստի, նախ կը խօսի սոխին վրայ, ետքը խնդիր կը յարուցանէ փայտին վրայ և վեր. ջը հարցադրուեցին կ'ընէ ամուսին վրայ: Այս հաշուով տեսակ մը երես. փոխանական սրահներու կարելի է նմանցնել Խասգիւղի չողենաւները, որոնք ամէն բանի կը նմանին բաց ի չողենաւէ:

Խասգիւղի գեղեցիկ սուրը, ընդ. հանրապէս գեղեցիկ է, պարկեշտ և մաքրասէր: Այս վերջին առաւելու. թիւնը քիչ մը վիճելի է: Ասոնք փխակիւ կը բանին և ժամանակ ժա. մանակ գործադուլ ալ կ'ընեն: Իսկ շատեր ալ զինուորականի ձերմակե. ղէն կը կարեն:

Գանի մը հազար Հայու տուն կայ հոս. բայց կարելի է ասոնցմէ մաս մը զեղչել, քանի որ ասոնք քանի մը վկաներու կը կարօտին իրենց Հայ ըլլալը հաստատող:

Գիւղին բերքն է մայրապետներ և հայրապետներ: Թէ և առաջին ապ. րանքէն միշտ կը գտնուի սքօֆ. բայց երկրորդը սպառած է ժամանակէ մը ի վեր:

Խասգիւղի օդն ալ միշտ գովեստ. ներով կը յիշուի. . . Լնդհանրապէս ամէն թաղին օդը, որչափ ալ դէշ ըլլայ՝ միշտ այդ թաղին վարժարա. նէն լաւ է:

ՊՈՒՍՏԱՐԱՐՅԻՆ
ՎԻՉՕՆԹ ԼՈՒՌԹԻՆՆՈՎՍԿԻ
(Յաջորդ անգամ ԵՒՆԻ-ԳԱՐՈՒ)

ՀԱՊԱՍՏՈՒՄ ԲԱՍՏԻՆԻ

Այսօր կարգ մը անկեալ փաշա- ներու՝ հին ընթացի պահուստ կողմից ան- ղարկու կամ առաջակու թեմա մը շինել տուած պալատները սկսած են ետ առնուիլ:

Նախկին սպարապետ Րիզա փա- շայի շինքերէն 10 հաւը գոնէ ետ պիտի առնուի:

Յիշիմ փաշայի շինքերը պիտի գործուին:

Եւ դեռ և այլն, և այլն: Ասիկա պիտի աղէկ և այս մա- սին ջերմացէս կը շնորհաւորենք Օսմ. Գոմիդէն, և կը յանձնարարենք որ ժամ առաջ այս շինքերը ետ առ- նելով նուիրեն ժողովուրդին, որուն գործունէն գողցուած վարաներով շին- ուած են անոնք:

Բայց, կը հարցնենք Օսմ. Գոմի- դէի թէ՛ միթէ մենք Հայերս ալ մեր բաժինը չունինք այդ մեծակառոյց շինքերուն մէջ:

Միթէ այդ պալատներէն շատեր Հայոց փարայով և Հայոց արիւնով շինուած չեն:

Եթէ դուք ուրանաք, աշխարհ կը հաստատէ...

Ուրեմն, մենք ալ մեր արդար բա- ժինը կը պահանջենք այդ շինքերէն:

Կը խնդրենք Օսմ. Գոմիդէէն որ, օրինակի համար, Րիզա փաշային ետ առնուած 10 շինքէն գոնէ մէկ հատն ալ մեր ազգին յատկացնէ, որպէս զի կարենանք որբանոց մը շինել:

Թո՛ղ Յիշիմ փաշայի նշան թաշի պալատը մեզի տան, որպէս զի Կեդ- բոնականը հոն փոխադրենք իբր օ- դատուս վայր: Թէ և հետո է քիչ մը, բայց խնդիր չէ մենք ձայն չենք հաներ. (Կեդրոնականին շինքը գը- տանք, հիմա մնաց ... անօրէնը գտնել):

Իզգէթ փաշայի պալատներէն մէկն ալ մեզի յատկացնեն որպէս զի երկրորդ ազգ. հիւանդանոց մը շի- նենք:

Միթէ մեր Իսլամ եղբայրները միայն կողոպտուեցան այդ փաշա- ներէն, կարծենք մենք ալ, Հայերս ալ բաւական կողոպտուեցանք, և թերևս մեր Իսլամ եղբայրներէն ա- ւելի կողոպտուեցանք...

Ես իմ մասին 5 ոսկի կ'ուզեմ Յիշիմ փաշայէ: Թող նախ և առաջ իմ 5 ոսկին տայ, մանաւանդ որ ... ձմեռնային բարտըսիւ ալ դեռ չկըր- ցայ շինել:

ԸՆԿԵՐ ԿԻՍՕ

Ա Պ Տ Ա Կ Ն Ե Ր

Չարիկ, բայց մտիկ ըրէ՛:

Բնաբաններ. —

Պ. Հիւկնէնի Բնաբանը. — «J'y suis, j'y reste!»

Հապիպ Մէլհամէի Բնաբանը. — «Երնէկ ազրարիկներ չունենայի:»

Օրմանեանի Բնաբանը. — «Աւա՛ղ փառացս անցաւորի:»

Տաճատի Բնաբանը. — «Ա՛հ, մօ- քուքս:»

★

Մեծ արուեստագէտ և մեծ դե-

րասան Պ. Վահրամ ֓ափազեան Ա- րարատեան ընկերութենէն քսան ոսկի ուզեր է... վարագոյրը բացուելէն երկու վայրկեան առաջ, երբ անկէ առաջ յայտարարեց թէ ձրի պիտի խաղայ: Կեցցէ՛ մեծ արուեստագէտը, կեցցէ՛, յաւէտ կեցցէ՛:

★

Անցեալ օր մեր խմբագրատունը այ- ցելեցին Յոյն եղբայրներէն Պ. Բրոտրօ- մօս, Պ. Պօտօս պանիրի վաճառական, Պ. Ազաթանգիւղոս և սափրիչ Արօս- թոլոս, որոնք շնորհաւորեցին մեզի, գովեցին, փառաբանեցին և ըսին թէ մենք մեծ մարդ ենք, թէ Բէկեանն ալ մեծ մարդ է: Մեր Յոյն բարե- կամները յետոյ Բիզանդիոնի տղա- բանը գացին, հետևաբար վաղը նոյն թերթին մէջ կը կարդանք ձերչ 3 1/2 դօլուն ուէզլամ:

★

Ներքին գործոց նախարար Հագգը պէյ գործի վրայ է, խորշախ գործու- նէութիւն ցոյց կուտայ. թէ ներքին գործոց նախարար է, և թէ բոլոր Հայ թերթերը աչքէ անցնող: Այս- պէս կարգ մը յօդուածներ թարգմա- ներ և Բերայի դատարանին զրկեր է որպէս զի դատ բանան: Աստուած երկար կեանք տայ. ժողովուրդը կրնայ հանգիստ քնանալ այսուհետև:

★

Արմաշ գացողները ամէնքն ալ իրենց ուխտը շնորհքով տեսակէն կատարեր են: Չարխարան Աստուա- ծածին սակայն իր աչքովը տեսեր է անանկ խայտառակութիւններ, ո- րոնց մասին գրով մը բողոքած է Տեղապահ Սրբազանին: Չարխարան Ս. Աստուածածնի բողոքագիրը պի- տի որոշուի նկատողութեան տունել:

★

Բերայի մէջ մարդ չմնաց որ չը ճանչնայ Եր. Միրիճանեանը, բոլոր մեծ մարդոց վարպետ դերձակը: Բայց Պ. Միրիճանեան միտն դեր- ձակ չէ, դերասան ալ պիտի ըլլայ և յառաջիկայ Կիրակի իրիկուն, Աղեք- սանդրիայէն եկած ազուր խուճով մը ի նպաստ Հայ գաղթականներու Արշակ Բ. պիտի խաղայ:

★

Եփրատ գետը միշտ կը հօսի կոր և վախ կայ որ Դուճագրուի տու- ները ողողուին. հետևաբար քեչիլն- ճիներ, խայրիճիներ և Խսիլիճիներ որոշեցին թուճեր կանգնել այդ ա- զէտին առաջը առնելու համար:

★

Հայ-լայթ ունինք Բերայի մէջ. հայ- լայթ ունինք նոյն իսկ Ազրիւր գիւ- ղին մէջ. այդ հայ-լայթէն ազջիկ մը սունել կ'ուզէ պարոն գիւղացի մը, մի ոմն Եսայի աղա Հրատեան: Աստուած խելք տայ քեզի. մեծ-իւր վաճա- ռականի մը քով գրագրի փառչա լլ- լալով մարդ ինքզինքը հայ-լայթէն կը կարծէ: Դուն ո՛ւր, անոնք ո՛ւր: Կը ճանչնա՞ք այս Պ. Չիւղպը. սուրու մըն է որ այսչափ կ'ըլլայ, հակառակ իր գիւղի ազրիւրներուն չոր ըլլա- լուն, ինք, չիս գիտեր ինչո՛ւ, այս- չափ թացիկ է: Պ. Եսայի, որ Եսայի մարգարէին չափ ալ խելք չունի, կը կարծէ թէ, միայն գլխարկ դնելով,

երկու բառ ֆրանսերէն խօսելով և հինգ հատ վաճառականի տան դռնէն ներս մտնելով, հայ-լայթի եղաւ. դնաց և ա՛լ կրնայ ուղած աղջիկը առնել: Վրա՛ս գրէ, պարոնիկդ դու և այդ- չափ բարձրերը մի՛ ելլեր, յետոյ գը- լուխդ կը կտարի բարձրէն ինկած ա- տենդ:

★

Պ. Արշակ Ալպոյաճեան Տեղապահ Սրբազանին չճանիր եղեր. արդեօք անոր համար որ այս տարի Հիւան- ղանոցի օրացոյցը իրեն չյանձնեց: Իսկ Պ. Արշակի Պատրիարքութեան քանտիտան է եղեր Կեսարիոյ առաջ- նորդը, որուն տխրահալ գործու- նէութիւնը ծանօթ է Կեսարիոյ և մանաւանդ... Եղկատի մէջ:

★

Ղալաթիոյ խորհրդարանէն ելլե- լով երկու ջոջ վաճառականներ ո- րոնք երեսփոխան ալ են և կաղինի ու գորգի մեծ գործ կ'ընեն, ճամ- բան խօսելով այժմէն կաթողիկոսա- կան թեկնածու մը կը պարտաստին. այս թեկնածուն վերջապէս որոշուե- ցաւ երբ կամուրջին գլուխը հասան. ընտրելին էր Տիար Մինաս Չերազ: Մրճերանը չիմանայ, որովհետեւ ինք էր որ ամէնէն առաջ առաջարկեց Կաթողիկոս ըլլալ... աշխարհական տեսակէն:

★

Եննիգարուցիք մահրում չմնալու համար, կիրակի գիշեր «մեծ գաւ- սէւը» կրկնուեցաւ: Այս անգամ Եննիգարուցիք աւելի հանգիստ կեր- պով մտիկ ըրին. ա՛լ աւելի հանգիստ պիտի ընէին սակայն, եթէ մի ոմն Պ. Անթուան ինքզինքը ցոյց տալու համար հինգ վայրկեանը անգամ մը ոտքի չելլէր:

★

Վերակազմեալ Հնչակեան՝ Վա- հան Թէքէեան ախմայ բառ մը ըսած էր երէկ Մանգուճեի մէջ: Տեսնանք Չալուչ օղու Երուանդ երբ պիտի ըսէ իր կամաւոր բառը. անշուշտ Հարենցի հետ քեքաքիք մը յետոյ:

★

Երէկ առտու յաստեայս առ Աստ- ուած փոխուեր է Օրթագիւղի աւա- գերէցը: Այսպէս կ'սկսէր վախճանեալ քահանային մահազգը: Միայն թէ մահազգը խմբագրողը կարծենք մոռ- ցեր է տակը հրատարակել նաև մա- հազգին քանակին որովհետև շատեր մղաններով հետի էին հասկնալէ այդ մահազգը:

★

Աղեքսանդրիոյ դատարանը 18 ամսուան տաժանակիր աշխատութեան և 35 ոսկի տուգանքի դատապար- տեր է Ահմէտ Սալապ անուն մէկը որ կաւալարութեան պատկանող գու- մար մը կոկորդը անցուցած էր: Չենք գիտեր թէ քանի՛ տարուան տաժա- նակիր աշխատութեան պէտք է դա- տապարտել թուրքիոյ այն պաշտօ- նատարները որոնք միլիոններ անցու- ցած են իրենց կոկորդը:

★

Ոսկեղջիւրի շոգենաւները այլևս բոլորովին կանոնաւորուեր են. ասոր վտան կրնաք ըլլալ, քանի որ ա- ռաջին բարենորոգումը սկսեր է ցը-

ռուկէն, որուն երկու կողմը նշա- նակուած թիւերը ջնջուեր են: Հե- տեւաբար երէկուընէ սկսեալ Ոսկեղ- ջիւրի շոգենաւները սկսան չորս վայր- կեանէն Սաղաթիւ հասնիլ և նաւակ- ներ մրցումի մէջ առաջնութիւն չկրցան շահիլ:

★

Պատրիարքարանի կարգ մը բա- րապանները՝ ո՛վ գլխէ ի՛նչ թագուն նպատակներով ազգ. երեսփոխանն- րու զրկուած հրաւիրագիրներ, իրենց տեղերը չեն հասցուցեր. ինչպէս տիար Մինաս Չերազի և ուրիշներու: Ի՛նչ է ասիկա. բարապաններն ալ արդեօք յանկարծ ազգ. երեսփոխա- նական և այլ կենսական խնդիրնե- րու մէջ խառնուիլ սկսան:

★

Գաւառներէն կը խնդրեն: Տեղապահ Սրբազանը ամէն օր կը յանձնարարէ և Սալատուրեան Կարապետ էֆ. միշտ թագրիւր կը գրէ: Այսչափ: Երբ բան մը կը գըր- ուի կ'երևի թէ եղած լմնցածէն կը սեպուի:

★

Նոյն Թուրքիոյ անուն դերմանա- կան տառով և դերմանական շուն- չով լեցուն թերթ մը, որ կը հրա- տարակուի մայրաքաղաքիս մէջ, սուտ ու սխալ լուրեր կը հրատարա- կէ և ասոր կը դարմանան մեր միւս պաշտօնակիցները: Ի՛նչ կայ դարմա- նալու. մարդուն բուն պաշտօնը ա՛տ է արդէն. ուրիշ ի՛նչ գործ ունի արդէն հոս:

★

Պատրիարքարանը որոշեց համ- րեատարութեան Ա. կարգի վկա- յական տալ Դուրեան Տ. Ղևոնդ վրդ. ի որ ամէն օր հարիւրաւոր խօսք չհասկցող գաղթականներու... խօսք կը հասկցնէ:

★

Չինուորականի մը իեփը անանկ է ուզեր որ երէկ ատրճանակը քաշէ և սպաննէ անցորդներ: Ո՞վ ի՞նչ կրնայ ըսել. մարդուն իեփին իեհեան չենք ա՛:

★

Ծխավաճառները ընթին դէմ ցոյց ըրեր են և Բ. Դուռը երթալով բողոքեր են Մեծ Եպարքոսին: Կարգ մը ոստիկան զինուորներ Բ. Դուռն առջև կեցող ցուցարարներուն սպառ- նացի են «Սօնրա պաշտա քիւրչիւ շուամեչէ Էսերիլ...» ըսելով: Սա մարդիկը մարդ չեղան դնաց. չկըր- ցանք հասկցնել որ «Օ ջաւրար պար- սագ օյքու...»:

Խ Ա Յ Ա Ք Է Լ Ա

ՊՏՏԿԵՐԱԶԱՐԻ ԵՐԳԻԾԱԹԵՐԹ ԿՈՎԿԱՍՍԱՆՍ

Ստացանք Խարաքիայի վերին երկու թիւերը. կը ծախուի Բերա՛ Կալոմա Սէրայի անկիւնի լրագրավաճառին քով. հատը 50 փր.

Վ Ա Ղ Ը «Կ Ա Վ Ո Շ»

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

ՓԱՄԱԳԱՅԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ
Լեզուագիտական եւ Գեղարուեստական, Գիշերօթիկ եւ Ցերեկեայ
Կ. Պոլիս, Գատը Գիւղ, Մէտօնիւրտար ճառագիտի
Ծրդ Տարեւոյան

Վարժարանն Գիշերօթիկ Հաստատութիւնն մըն է եւ աղջկանց խնամ-
եալ եւ հիմնական կրթութեանը նուիրուած է լեզուագիտական եւ գեղար-
ուեստական ուղղութեամբ:

Գիշերօթիկ եւ Ցերեկեայ աշակերտուհեաց համար հանգստաւայելութեան
եւ առողջագիտական ամէն միջոց խորհուած է:

ԱՂԶԿԱՆՑՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Եւ գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ
զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն
եւ Թուրքերէն լեզուները, մասնագէտներու ձեռքով:

Մասնաւոր խնամքի եւ հոգածութեան առարկայ է Ֆրանսերէն եւ Անգլ-
գիտերէն լեզուաց Խօսելավարժութիւնը (քոնսերիւ): ԳԱՇՆԱԿ Եւ ՋՈՒԹԱԿ:

Գիշերօթիկներու համար կատարեալ սնունդ եւ ընտանեկան անթերի
խնամք:

Աշակերտաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 1 Բէ.:

Տեսուհի Հիմնադիր-Տնօրէն
ՀԻՒՐԻՒՔԵԱՐ ՓԱՄԱԳԱՅԵԱՆ Յ. Գ. ՓԱՄԱԳԱՅԵԱՆ



VALSE
BRILLANTE

ԳՐԻԳՈՐ ԹՕՂԱՅԵԱՆԷ

Գին 5 դրու

Կեդրոնատեղին է մեր Խմբագրատունը

Կը ծախուի Կ. Պոլսոյ բոլոր երաժշտ.

խանութիւններուն մէջ

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ
(ԳՕՂԷՑ)

Գիշերօթիկ եւ ցերեկեայ, 12 տարուան կատարեալ ընթացքով. 3 տարի
մանկապարտէզ, (երկուսու) տարրական դասընթացք (երկուսու) միջին դասըն-
թացք (միայն աղջկանց), բարձրագոյն եւ երկրորդական հինգ տարուան ըն-
թացքով (միայն աղջկանց):

Բաղմաթիւ Պոլսեցի եւ գաւառացի ազգասէր ծնողաց առաջարկին վրայ,
բաց նը Սկիւտար-Իճատիէի կեդրոնին մէջ, օգտուելու եւ բարձրագոյն ընդարձակ
չէնթիմը մէջ մեր աղջկանց բարձրագոյն-երկրորդական վարժարանը, ուր
ազգային եւ ընտանեկան ընտիր դաստիարակութիւն մը պիտի տրուի, ձեռն-
հաս եւ պարկեշտ հայ եւ օտարազգի ծանօթ ուսուցչաց ձեռամբ: Բացի կրօ-
նական եւ բարոյական ուսուցումէ եւ մայրենի լեզուէ, խնամով պիտի աւան-
դուին թուրքերէն, ֆրանսերէն եւ անգլիերէն լեզուները բոլորովին նոր եւ
մանկավարժական դրութեամբ, ինչպէս նաեւ ուսանողական, բնագիտական
եւ բնագիտական, աշխարհագրական եւ պատմական ճիւղերը, գեղարուեստա-
կան, ձեռարուեստի դասերը, ձայնական եւ գործիական երաժշտութիւն՝ բաղ-
ձացուած եղանակաւ: Վարժարանը կը բացուի Սեպտ. 1ին եւ դասախօսու-
թիւնները կը սկսին նոյն ամսոյն Ցին Բէ. օր:

Կը հրաւիրուին Պատ. ծնողք եւ պաշտպանք մինչեւ 1 Սեպտ. դիմել
արձանագրութեան համար Տնօրէնութեանս, որ ամէն օր մինչեւ կէս օր կը
գտնուի իր բնակարանը Սկիւտար-Իճատիէ, Գալսէրի Օղլու փողոց թիւ 13:
Պայմանք դիւրամասնելի: Հինգ աշակերտով դասարանները պիտի բացուին:
Չափահաս օրիորդներ մասնաւոր ճիւղերու կրնան հետեւիլ:

Հիմնադիր-Տնօրէն
ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԼԱՍԹԻԿ

Ձմեռը մօտեցաւ, անձրեւները սկսան, հետեւաբար լասթիկները եւ լաւ
լաստիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեղի... մահ-
կանացուներու համար:

Լաւ լասթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք եւ չնորհքով
մարդիկ էք: Արդ զիմեցէք, գացէք առէք Ֆրանսական այն լասթիկները
որոնք շատ քիչ մնացած են եւ 4 ամիս կառանքիով կը տրուին: Անցեալ
տարի այս ազրանքը կամուրջին գլուխը Երպիթիին խանութը փոքրա-
քանակ, իսկ Ալլըր Էֆ. խան, Եօ. 27 Պողոսօթի ըսով կը ծախուէր մեծա-
քանակ. հիմայ թէ մեծաքանակ եւ թէ փոքրաքանակ կը ծախուի Պոլիս,
Ալլըր Էֆ. խան, թիւ 27, տիար Մկրտիչ Պողոսօթի գրասենեակը:

Ո՛վ Ծաղիկի եւ կալոռոյի ընթերցողներ, վազեցէ՛ք տիար Պողոսօթի
ըսով եւ անպատճառ գնեցէ՛ք հատ մը:

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ԶԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ
Շ Ի Շ Ե Ր
(Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղօրէից վաճառականներուն համար մասնաւոր շին-
ուած շիշերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր:
Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պողոսօթ (Ալլըր Էֆէնտի
խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճոխ ու այ-
լազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու: Եւ կարող է մրցիլ ամէն
կերպով: Վստահ եւ ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր
Հայ դեղագործները եւ տոկիսները պիտի փութան իրենց գնումը ընել այս
Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ հատիկ աւելորակ տունէն, քաջալերելու
համար Հայ ձեռնարկուն որ միևնոյն ատեն աժանութիւնը սնարան ընտրած
է իրեն:

ԱՉԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ Ո՛Վ ԿԻՆԵՐ...
Այո՛ աչքերնիդ լոյս... 25՛ք գիտեր... Ուրեմն մտիկ ըրէ՛ք:
Հրատարակուեցաւ ձեր այնքան անձկանօք սպասած եւ ձեզի համար
այնքան օգտակար միակ գիրքը՝

„ԵԻԱ“ Բ. ՀԱՏՈՐԸ

որ Չափական գիտութեանց եւ կարուձեւի ծանօթ ուսուցիչ հանգուցեալ
Մեղքոն էֆ. Գալէնտէրեանի հեղինակած միակ դիւրուսոյց եւ մեթոտիկ հա-
տորն է՛ կար ու ձեւ սորվիլ փափաքողներուն:

Այ մի՛ վախճաք. ա՛լ ուսուցիչ մի՛ փնտռէք. ա՛լ մոտիքներու պօջ
պօջ փարս մի՛ տաք: Միայն 60 դր. զննալով գնեցէ՛ք մէկ հատ «ԵԻԱ»
Բ. հատորը, բարեփոխուած եւ բազմաթիւ պատկերներով ճոխացած:

Հասցէն եւ կեդրոնատեղին՝ Ս. ՄԱՆԿԵԱՆ, Ղալաթիա, Գոմիսիոն խանի
տակ թիւ 27. Վիշըր Պանքի ճիւղ գէ՛մը:
Փութացէ՛ք. մի՛շտ փութացէ՛ք:

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՔ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

- 1. Պատկերազարդ Տարր. Աշխարհագրութիւն 2,50 դր.:
- 2. Պատկերազարդ Միջին Աշխարհագրութիւն 7 դր.:
- 3. Պատկերազարդ Բարձր. Աշխարհագրութիւն 6 դր.:
- 4. Պատկերազարդ պատմ. Արեւելեան Հին ազգաց եւ Յունաց 5 դր.:
- 5. Համառօտ Օսմ. պատմութիւն 2,50 դրու:

Հանրածանօթ մասնադէտ հեղինակին կրկին տպագրութիւններով գնա-
հատուած սոյն օգտակար դասագիրքերը կը գտնուին բոլոր գրալաճառնե-
րուն ըսով:



HYGIENE BEAUTE
CRÈME SIMON

ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ
ՈՐՈՒՔ Կ՛ՈՒՋԵՆ ՊԱՇՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ
ՊԵՏՐ Ե ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾՍԾԵՆ
ՃԵՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ
ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ
ՀՆԱՐՈՒԱԾ 1860

ԱՄԵՆԱՇԻՆ

ԳԵՂ ԵՑԿԱՅՆՈՂ ՔՐԷՄԸ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

— ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՉԱՐՆԵՐՈՒ ՄԷՁ —

ԳՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընելը —

— ՎԱՃԱՌԱՆԻՇԻՆ Եւ ՄԵՐԺԷԼ —

ԿԵՂԾ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՉԱՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ՍՈՒՆՑ ՊԵՄՈՒԹԻ

ԲԱՅԱՐՉԱԿԱՄԵՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՁ